

ոսկիի (տէր) մարդերը (հարուստները) (էջ 173-174):

Է. - Խառանի հաշտութիւնը:

Յետոյ Պայտ քաղեց Խառանի վրայ, իջաւ Պաճուտտա, ու զրկեց իր յառաջապահ զոնդը: Խառանի բնակիչները զոցեցին զոնքն անոնց առջեւ: Յետոյ հետեւեցաւ (յառաջապահ զոնդին), եւ երբ հասաւ, ոչ-քրիստոնէայ բնակիչները իրեն լուր զրկեցին իմացնելով անոր թէ իրենց ձեռքերուն մէջ կայ քաղաքին մէկ մասը եւ իրմէ խնդրեցին որ Եղեսիոյ երթայ, եւ ինչ հաշտութիւն որ բնեն, իրենք ալ հաւան են: Թողուցին որ քրիստոնէաներուն հետ վարուի ինչպէս որ ուզէ մինչեւ որ անոնք (քրիստոնէաները) իրեն վան: Քրիստոնէաները այդ բանն իմացան, իրեն լուր զրկեցին թէ իրենք ալ կ'ընդունին ինչ որ խառանցիներուն առաջարկեց, ու անոր հպատակեցան (էջ 174):

Ը. - Եղեսիոյ կրկին գրաւումը:

Եկաւ Եղեսիա. բնակիչները հաւաքուած էին անոր դէմ: Մէկ ժամ շարունակ նետահարեցին Իսլամները. եւ երբ անոնց կտրիճները դուրս ելան քաղաքէն, պարտուեցան Իսլամներէն մինչեւ որ քաղաք քաշուեցան: Քիչ մը կոտուելէ վերջ հաշտութիւն խնդրեցին ու կեանքի ապահովութիւն: Պայտ անոնց հաւանեցաւ ու անոնց զիր զրեց որուն օրինակը այս է. «Յանուն ամէնողորմ եւ ամենազուրկ Աստուծոյ՝ այս զիրը Պայտ Պըն Ղանմէ Եղեսիոյ Եպիսկոպոսին. եթէ զուր բանաք ինծի քաղաքին դուրս՝ պայմանաւ որ ամէն այր մարդու համար մէկ տինար վրձարէք եւ երկու քոռ ցորեն, ապահով կ'ըլլան ձեր անձերը, ինչքերը, ու ձեզի հետեւողները: Դուք պարտական էք առաջ-

նորդել մոլորեալին, չտիւլել ճամբաներն ու կամուրջները եւ առաջնորդել (ճամբայ կորսնցնող) Իսլամներուն: Աստուած վրկայ թող ըլլայ, եւ Աստուած բաւական է իւր վկայ»:

Ինծի պատմեց Տառու Պըն Ապտըլ Համիտ լսելով իր հօրմէն, իր պապէն թէ հետեւեալն է Եղեսիոյ ժողովուրդին դրած թուղթը:

«Յանուն ամենազուրկ եւ ամէնողորմ Աստուծոյ. այս է զիրը Պայտ Պըն Ղանմէ եւ հետը եղող Իսլամներէ Եղեսիայի բնակիչներուն. Ես անոնց ապահովութիւն շնորհեցի իրենց արիւններուն, ինչքերուն, զաւակներուն, կիներուն, քաղաքին եւ ջաղացներուն, եթէ անոնք վճարեն իրաւունքը որ պարտական են ձեզի եւ ձեռք ունինք անոնց վրայ, որ չտիւլեն կամուրջները եւ առաջնորդեն մոլորածները: Աստուած վրկայ ըլլայ, եւ իր հրեշտակներն ու իսլամները» (էջ 174):

Թ. - Սուլայսաթի առումը:

Պատմուեցաւ թէ ապա եկաւ Պայտ զէպի Խառան եւ ուղարկեց Սաֆուան Պըն ալ-Մու'աթթալ ու Հապիպ Պըն Մաւլամա ալ-Սիհրի զէպի Սուլայսաթ: Պայտ հաշտուեցաւ Խառանի բնակիչներուն հետ՝ Եղեսիոյ հաշտութեան օրինակին վրայ, ու բացին անոր դռները: Ինքը հոն կառավարիչ նշանակեց մարդ մը ու զնաց զէպի Սուլայսաթ: Հոն դտաւ Սաֆուան Պըն ալ-Մու'աթթալ ու Հապիպ Պըն Մաւլամա քաղաքին առջեւ կանգնած: Անոնք զրաւած էին անոր (Սուլայսաթի) զիւղերն ու բերդերը: Բնակիչները հետը հաշտուեցան Եղեսիայի հաշտութեան հիման վրայ: Պայտ դարձաւ Եղեսիա ուսկից մեկնած էր (էջ 175):

(Շարունակելի)

Մ Ա Ր Ա Շ Ա Հ Ա Յ Բ Ա Ր Ք Ե Ր

Բուն բարեկենդանի կիրակին է: Մարաշը ծածկուած է ձիւնի տակ: Բուխուրիկները հանդարտ կը ծխեն: Տուներէն ներս, ակութին շուրջ հաւաքուած են ընտանիքի անդամները: Քարիւղէ լապտերի մը տմոյն շողերու ներքեւ, տանտիկինը սփռոց մը կը տարածէ դետին: Ընթրիքը պատրաստ է: Ամէն ոք հաւկիթ կ'ուտէ այս երեկոյ զուարթ բարեկենդանը հաւկիթով փակելու եւ Չատիկին ալ հաւկիթով բանալու համար:

Խօսակցութեան տաք միջոցին պապիկը կ'ըսէ փոքրիկներուն. «Մօտ օրէն քառասուն զինուորներ պիտի վան մեր տունը, ու մենք ամէն օր զինուոր մը պիտի մորթենք»: Քառասուն զինուորները, պահքի քառասուն օրերն են:

Յաջորդ օրը, մեծ պահքի առաջին երկուշաբթին է, որ «Հարրածի տօն» կը կոչուի: Գինեւէրները վերջին անգամ մըն ալ կը գինովնան քառասուն օր ապաշխարելէ առաջ:

Ամէն տան մէջ եռուղեւ մը կայ այսօր: Պառաններ ու մանկամարդեր կերակուրներու ամանները կը լուան մեծ խնամքով: Իւղի հոտն անգամ պէտք է ջրնուի տունէն: Կը բռնեն նաեւ կատուն, տան բրդոտ թագուհին, ու կը լուան անոր բերանը, որ չըլլայ թէ պնակները լըղելով իւղոտէ զանոնք:

Կէսօրուան ճաշին, ամանի մէջէն, թրթու ապուրի շողին նաղելով կը բարձրանայ երգիքն ի վեր: Ընտանիքի անդամները ստիպուած են ուտել այդ ապուրէն, որպէսզի իրենց ստամոքսին բոլոր իւղոտ կերակուրները հալին ու մարսուին:

Այսօր, սոխերու կոյտի մէջէն խոշոր սոխ մը կ'ընտրեն եւ վրան եօթը փետուր

անցրնելով կը կախն դաշն առաստաղէն: Շարաթը անգամ մը, փետուր մը կը հանեն սոխին վրայէն: Այդ կերպով յայտնի կ'ըլլայ ընտանիքի անդամներուն թէ քանի՞ շարաթ մնացած է Չատիկին:

Երեքշաբթին՝ Մալիի տօն կը կոչուի: Տան մէջ աւելցած կերակուրներով թող քիչ մըն ալ խեղճ անասունները խնճոյք ընեն:

Չորեքշաբթին՝ Գելլի (Գայլի) օրն է: Կ'ըսեն թէ միս եւ ոսկր մէջտեղէն վերցրուած ըլլալով, անօթի դայլեր քաղաքներու վրայ կը յարձակին:

Այս երեք օրերուն՝ խանութները փակ կը մնան: Չորեքշաբթի առտու եկեղեցին ի է հաւատացեալներով: Քահանան ալ է մէնուն զիւտուն վրայ մոխիր կը ցանէ. եւ կամ տան մէջ իրարու մոխիր կը ցանեն: Մոխիր կը ցանուի նաեւ տան սեմին. ներս մանողը ալ լեւա աղաչխարութեան տուն կը մտնէ:

Մեծ պահքի առաջին շարաթը սովորութիւն եղած է քեօփթէ չուտել. «մէջէն ոսկոր կ'ըլլէ» կ'ըսեն:

Իսկ եթէ մանուկներու մէջ մածուն ուտելու փափաք արթննայ, մայրիկը՝ նաշիհի մէջ ջուր խառնելով եւ հաց բրդելով իր տղոց կը կերցնէ իրր մածուն: Ո՛րքան միամիտ էին հին օրերու տղաքը: Չեմ գիտեր թէ ծնողներ՝ իրենց այս անմեղ գիւտով պիտի կարենա՞ն խաբել նաեւ այսօրուան վառվառ մանուկները:

Մեծ պահքի առաջին երկուշաբթին, սովորութիւն է եօթը տեսակ նիւթերով Զամպուռ կոչուած ուտելիքը պատրաստել եւ մեծ ամանի մը մէջ պահելով՝ շարաթը գոնէ անգամ մը ուտել անկէ, ամբողջ մեծ պահքի ընթացքին: Այս ուտելիքին

եթեր նիւթերն են. 1. Զամպուռ, որ կանաչ խոտ մըն է. - 2. Սիսեռ. - 3. Ազով խարկուած ձաւար. - 4. Զմերուկի կուտ. 5. Շուշմա. - 6. Մէլէնկիշ (շալրի պիստակ). - 7. Աղտոր:

Կայ նաեւ համբաւաւոր Տրէ կոչուած կերակուրը: Տրէ պատրաստելու համար, տանտիկինը խմորէ եօթը լաւաշներ կը բանայ զրդնակով, եւ պահ մը կարմիր կըրակին ցուցնելէ ետք դանոնք՝ դանակով կը ջարդէ ամանի մը մէջ. ապա վրան լուրիա, սիսեռ, բրինձ ու դահիճ (շուշմայի իւղ) աւելցնելով՝ Տրէն շինուած է արդէն: Հարուստ թէ աղքատ, չորեքշաբթի կամ ուրբաթ օրերը կ'ուտեն այս կերակուրէն, եօթը անգամ ամբողջ մեծ պահքի ընթացքին:

Հաղիւ սկսած Քառասնորդական պահքը՝ սուրբ Թորոսի (Թէոփորոսի) տօնը կու գայ ժպիտ մը ձգելու ապաշխարութեան միապաղաղ օրերուն վրայ:

Այսօր դահին-հաց եւ հատիկ կ'ուտէ ամէն ոք:

Յաջորդ օրը կիրակի՝ Ժողովուրդը դունդադունդ ուխտի կ'երթայ Ս. Թորոսի նուիրուած եկեղեցիի աւերակները, որ կէս ժամ հեռու, քաղաքին հիւսիս-արեւմտեան կողմը կը գտնուի: Օգը ցուրտ է: Արեւի դուարթ շողերը տակաւին անկարող են ձիւնին քօղը պատուելու: Ամէն ուխտաւոր իր հետ կը տանի հագուստէն կամ թաշկինակէն կտոր մը, եւ դայն, որպէս նշան իր հիւանդութեան, սրբավայրին մօտ բարձրացող մենաւոր կաղնիի ծառին կը կապէ, աղօթելով որ շուտով կատարուի իր փափաքը:

Աղօթքներուն կը յաջորդէ խրախճանքը: Ժողովուրդը, մինչեւ երեկոյ ուրախ ժամեր կ'անցընէ հոն, հրեաներու գերեզմաններու մերձակայքը: Երիտասարդներ զանազան խաղերով կ'աղմկեն ընթերցան անդորրութիւնը: Գնդակի, վաղքի, ուտուծի խաղեր իրարու կը յաջորդեն: Սո-

վորաբար, երկու խումբերու բաժնուելով պարսատիկով զիրար քարկոծելն ալ խաղերու մաս կը կազմէ:

Քանի մը շաբաթ յետոյ, ահա նախ միջինքը: Նոյն օրը եկեղեցին սովորականնէն աւելի լեցուն է հաւատացեալներով:

Միջինքն ալ ունի իր յատուկ կերակուրը: Տանտիկինը՝ թեղնիքը սոթթած, ալիւրէ ու ձաւարէ քօփքէ կը շաղուէ. յետոյ անկէ փոքրիկ դունտեր շինելով, մէջը բանջարէ, դահինէ, ընկոյղէ, սոխ ու սիսեռէ պատրաստուած խառնուրդ կը լեցնէ ու տաք ջուրի մէջ կը խաչէ: Գունտերէն մէկուն մէջ կապոյտ ուլունք մը թաքցուցած է մայրիկը: Կէսօրին, ամբողջ ընտանիքը ճաշին շուրջ է: Երանի՜ անոր՝ որուն կերած կլորակին մէջէն ելլէ այդ բախտաւորչակ ուլունքը. « Երուսաղէմ պիտի երթաս » կ'ըսեն իրեն:

Այս կերակուրէն յետոյ սեղանի վրայ կայ նաեւ չամիչէ, չոր սալորէ, տանձէ, ընկոյղէ եւ ուլալէ պատրաստուած համեղաճաշակ բանդակը: Մեծ ու պղտիկ, ընդհանրապէս փայտէ դաշակներով կը ճաշակեն այդ քաղցրաւենին:

Միջինքին կը յաջորդէ Քառասուն Մանուկներուն տօնը: Այդ օրը խստիւ արդիւնաւոր է լուացք ընել եւ բաղնիք երթալ, ի յիշատակ սուրբ մանուկներու լիճ նետուելուն: Բաղնիք դացողին կամ մաղերը կը ճերմկին, եւ կամ ոտքը կը կոտրի, կ'ըսեն: Իսկ Քառասուն Մանկանց եկեղեցիին մէջ, քառասուն պատրոյգներու աստղահոյլ մը կը պլպլայ ի պատիւ քառասուն մանուկներուն:

Ծաղկազարդի տօնը Զատիկի չեղուրթեամբ կը կատարուի Մարաշի մէջ: Բերութիւնը իր ձիւնէ մաշած հագուստները վրայէն նետելով, կանաչ է հագնել: Քաղցրարոյր ծաղիկներ, իրենց երփներանգ աչքերը բացած են զարնան համբոյրին:

Ծաղիկներու նման ժողովուրդն ալ զարդարուած է տօնական հագուստներով:

Այրերը կարմիր կօշիկ (եջմէնի) են հագած: Ամէն ոք ձիթենիի օրհնուած ճիւղ մը ձեռքին, տուն կը դառնայ եկեղեցիէն: Զիթենիի ճիւղը սենեակին դարդը կը կազմէ մինչեւ յաջորդ տարի:

Կէսօրէն ետք Դոնբացէք է: Աղջիկներու բաղմունքին մը ահա եկեղեցիին մէջ. անոնք խուռներամ եկած են Դոնբացէքին, իրենց բախտին բացուելու յոյսով աւրացուն: Յետ արարողութեան, թոթով մանուկներ կ'առաջնորդուին քահանային մօտ, որպէսզի եկեղեցիի դրան բանալին անոնց բերանը դնելով լեզուին բանայ եւ խմաստութեամբ լեցնէ անոնց միտքը:

Ահա աւազ չորեքշաբթին: Դարձեալ թթու ապուրը կը տեսնուի կէսօրուան սեղանին վրայ: Միայն թէ Խուռուկ լսուած ընտել կայ այս անգամ թթու ապուրին մէջ: Խուռուկը՝ աղատքեղի նման բանջար մըն է, որ միայն Զատիկի շրջանին կ'երեւի դաշտերու մէջ եւ յետոյ կ'անհետի: Աղքատներ պարտէզներէն քաղելով դայն՝ տունէ տուն կը ծախեն, փոխարէն ստանալով քիչ մը ձաւար:

Աւազ հինգշաբթի օրուան պաշտօնական կերակուրն է «աղամաղա»ն: Զայն պատրաստելու տարրերն են՝ ամբուկի զըլ-խարկը, սոխ, աղ ու պղպեղ: Կծու եւ աղի կերակուր մըն է, որ պէտք է ուտել ի նշան Քրիստոսի հրեաներէն բռնուելուն:

Զատիկան հաւիթներն ալ կը խաչեն այսօր եւ կարմիր ներկելէ յետոյ՝ աւազ ուրբաթ օր բարեկամներու կը բաժնեն զանոնք: Հաւիթներու հետ կը բաժնուի նաեւ Քէօմպէ կոչուած հացը՝ որ թթու խմորով եւ իւղով պատրաստուած է:

Աւազ ուրբաթին ժողովուրդը եկեղեցի է դարձեալ: Կէսօրուան կերակուրն է քաղցրաւ եւ ոսպով շինուած ապուր, որուն մէջ կը լողան կլոր սոխեր: Զէ՞ որ այսօր քաղցի խմորցիներ Քրիստոսի: Նոյնիսկ դրացի թուրքեր, հետեւելով հայերուն, կը պատրաստեն վերոյիշեալ ապուրը եւ

չրթունքնին շփափացնելով կ'ուտեն դայն կէսօրուան ճաշին:

Ահաւասիկ Զատիկի ճրագալոյցը: Աւազ շաբաթ՝ կէսօրէն ետք, ժամը 2-ին կը սկսի ժամերգութիւնը, ընթերցուածները եւ պատարագը: Եկեղեցին ողողուած է մոմերու լոյսերով: Ամէն ոք ծոմ է ու կը հաղորդուի պատարագի ընթացքին:

Ժամը հինգէն ետք եկեղեցին կը պարպուի: Ամէն ոք տուն կը փութայ, ուր արդէն պատրաստ է ընթրիքը: Սփողոցին վրայ կ'երեւի տապկուած բանջար, հաւկիթ եւ ձուկ:

Տուներու ճրագները վառ կը մնան այս գիշեր: Ոմանք շուտով անկողին կը մըտնեն: Կէս գիշերին փողոցներու մէջ երթեւեկը կը սկսի. ամէն մարդ եկեղեցի կը փութայ արարողութիւններուն ներկայ գտնուելու: Մեծ հանդիսաւորութեամբ կը կատարուին ժամերգութիւնն ու պատարագը:

Զատիկի առաւել, մթնշաղին եկեղեցական արարողութիւններն աւարտած կ'ըլլան արդէն: Արեւծագէն առաջ ամէն ոք իր տունը պէտք է գտնուի: Զէ՞ որ Յիսուս արչալոյսէն առաջ իբրեւ նոր Արեգակ մը յարութիւն առաւ մութ քարայրէն:

Ահա արեւը բեհեղեայ շողերով կ'երեւի հորիզոնին վրայ: Զատիկ է այսօր. Քրիստոնէութեան մեծագոյն տօնը: Զուարթ է ընթերցումը, դուարթ է ամէն սիրտ: Բարեկամներ իրարու տուն կ'երթան Զատիկ շնորհաւորելու: «Քրիստոս յարեալ ի մեռելոց» կ'ըսէ հիւրը ներս մտնելով: «Օրհնեալ է Յարութիւն Քրիստոսի» կը պատասխանէ տանէրը: Ըմպելի եւ հանդիսապատու (լոխում) կը հրամցուի հիւրերուն: Ընդհանրացած է արդէն հաւիթ զարնուելու սովորութիւնը:

Կէսօրուան կերակուրն է եղինձ (փլաֆ), քովը հորթուկի խաշած միս. եւ անոր արդանակը որ կէս-նոր կը կոչուի:

Ունեւորներ դառնուել ալ կ'ուտեն այս կէսօր:

Զատիկին Երկրորդ օրը մեռելոց է: Գե-
րեզմանատունը լի է հաւատացեալներով,
որոնք կ'աղօթեն եւ քահանային օրհնել
կու տան իրենց ննջեցեալներու գերեզման-
ները: Ոմանք կու լան կողկողազին. ու-
րիշներ՝ իրարու հետ հաւկիթ կը դարնը-
ւին: Կատարեալ տօնավաճառ մը դարձած
է գերեզմանատունը. հոն կը գտնէք ամէն
տեսակ շաքարեղէն, խմորեղէն, ու շէր-
պէք: Ապա խումբ խումբ պարտէզները
կ'երթան ուղարկ հաղար ուտելու:

Եւ երբ յանկարծ անձրեւէ, հաւկիթնե-
րու գունաւոր կճեպները քշել-տանելու
համար է այս անձրեւը, կ'ըսէ ժողո-
վուրդը:

Զատիկի երեքշաբթին, մօտակայ կանա-
չազարդ բլուրները կ'երթան պտոյտի: Եւ
ահա յանկարծ բարձրադաղակ դուռ՝
դռնուներ կը լսուին: Կտրիճ երիտասարդ-
ներն են որոնք կը խաղան: Անոնք խմրո-
վին կը յարձակին մէկու մը վրայ ու զայն
հրելով հրմշակելով բլուրին ստորոտը կը
քշեն մեծաձայն քրքիջներու մէջ: Նման-
օրինակ խաղեր կը կրկնուին նաեւ բարե-
կենդանի գուարթ օրերուն:

Զատիկի տօներուն կը յաջորդէ Համ-
բարձումը: Նախընթաց Երեկոյ, արեւը
մարը մտնելէ յետոյ, խումբ խումբ աղ-
ջիկներ ժպիտը իրենց շրթունքին, դոյլը
ձեռքերնին, եօթը տունէ, եօթը քար, եօթը
տերեւ եւ եօթը ափ ջուր կը հաւաքեն:

(Շարունակելի)



Ամէն ոք կը փութայ մատնոց մը, բանալի
մը, մատանի մը եւ կամ ուրիշ ոք եւ է
առարկայ մը ձգել դոյլին մէջ: Դոյլը
պէտք է բնաւ գետին դնել, այլ բերանը
լաւ մը զոցելէ ետք լաթով, ծառի մը ճիւ-
ղին կամ պատէն կախուած կը մնայ մին-
չեւ յաջորդ օր:

Համբարձման տօնին, պատարագէն
վերջ, դուռ դրացի կը հաւաքուին տան
մը մէջ: Զուարթ խօսակցութիւն մը կը
սկսի: Ամէն մարդ անձկազին կը սպասէ
վիճակի սկսելուն: Կախուած դոյլը կը բե-
րեն. հարսնցու աղջիկ մը կը բանայ դոյ-
լին բերանը, հաւատալով որ ատով իր
բախտն ալ պիտի բացուի: Յետոյ դոյլին
ըով կը բարձի կոկոն աղջնակ մը. անթա-
փանց լաթ մը կը ծածկէ դոյլն ու աղջիկը:
Եւ ահա կը սկսի վիճակահանութիւնը:
Երգիչներ, ջութակի ընկերակցութեամբ,
բարեկուշակ կամ չարազուշակ երգեր
կ'երգեն տուն առ տուն: Ամէն երգի վեր-
ջաւորութեան, վիճակահանութեան զե-
կավար տիկինը բարձրաձայն կ'ըսէ աղջը-
նակին.

Հանկ ախնին, հանկ

Ասոր տարան բարա է:

«(Ասոր տարին բարի է)

Ու փոքրիկը դուրս կ'երկարէ թրջած ա-
ռարկայ մը: Մերթ ծիծաղ, մերթ փափը-
սուք իրար կը փոխանակեն վիճակահա-
նութեան ընթացքին:

Հ. ԵՓՐԵՄ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

ՊԱՏՍԿԱՍՏԱՅՆԻ ԶՐՎԵԺԸ

Խորտակելով ժայռերուն ամբարտակները բոլոր
Դուրս կը նետուիս նախամարտ զօրագունդի՝ մը նըման,
Կ'երգես անվերջ փրփրայեղձ գահավիժման չունչով լայն,
Խորտակելով ժայռերուն ամբարտակները բոլոր:

Կը լսուի ե'րգըդ խրրոխտ ազատութեա'ն փողին պէս,
Երբ դըրօշները կ'անցնին փողոցներէն ոգեչունչ,
Լեռնաբընակ ամէն տան սեմին առջեւ հունչ առ հունչ
Կը լսուի ե'րգըդ խրրոխտ ազատութեա'ն փողին պէս:

Լերկ ափունքներըդ չունին գեղապաճոյճ ո'չ մէկ կայք,
Ապերասան ես հանգոյն բընութեան խեռ տարրերուն,
Ետիդ ձրգած դոմերուն փշրած ես ոյժն ու աւիւն
Լերկ ափունքներըդ չունին գեղապաճոյճ ո'չ մէկ կայք:

Պիտ' ըղձայի քեզ նըման ըլլալ ազա'տ եւ հրգօր,
Երբ հողմին մէջ կը ձայնես աւելի բարձր ու վէս,
Երբ գերդ նըժոյդ գեղաբաշ կ'անցնիս դուն իմ առջեւէս,
Պիտ' ըղձայի քեզ նըման ըլլալ ազա'տ եւ հրգօր:

Ըլլալ քեզ պէս խութէ խութ արիւնլըւայ, բայց անսա'նձ,
Ներչնչման մէջ սիրան իմ միշտ յորձանքներուդ պէս փրփրուն,
Նետուի'լ յառաջ, ու երգել բարձրադաղակ օրն ի բուն,
Ըլլալ քեզ պէս խութէ խութ արիւնլըւայ, բայց անսա'նձ:

Հանգոյն քեզի վայելել բընութեան գեղն համօրէն,
Այս վիթխարի ժայռերուն ամայութի'ւնը մըռայլ,
Արեւուն մէջ, լուսնին տակ ես իմ երգով արբենալ,
Հանգոյն քեզի վայելել բընութեան գեղն համօրէն:

Երգէ' անվերջ, երգըդ թող լեցնէ անտառ եւ հովիտ,
Լեռներէ լեռ թող ոգիդ չըջի ազատ եւ արի,
Ամէն սրտի մէջ ձայնիդ թող արձագա'նգը լսուի,
Երգէ' անվերջ, երգըդ թող լեցնէ անտառ եւ հովիտ:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

Աւստրիա